եւ պոռնիկս, նաեւ այլազգի եւ թուրք տեսուչ օրինաց գոլ և հրամայող իշխող քահանայից և կանոնաց առաջնորդ երթեալ։ Ոչ թէ խաւարն մածեալ ընդ խաւարի եւ կամ առաջնորդեալ կոյր ընդ կուրի, այլ զբազումս գայթակղեցուցեալ զպարզամիտս, և զհաւատարիմ ծառայսն Աստուծոյ գթեցուցեալ և թերացուցեալ ի հաւատոց(*)։ Որոց դատաստանն մի արդարասցի, թէպէտև ըստ մեղաց մերոց թոյլ ետ նոցա Արարիչն մեր(–)։

Եւ ի վերայ այսր ամենայնի զայսքան ժամանակի եղեալ զեկեղեցոյ և զաթոռի իրաւունքն և զհասկն, որ աւանդեալ ի նախնեաց յառաջագոյն եկելոց աստ ի քաղաքս՝ առ ի պէտս աղքատաց, հիւանդաց և բանտարգելոց. յորժամ ի ծածուկ էր՝ կայր աւրհնութիւն, եւ յորժամ եղեւ յայտնի ի ձեռն անոպայից փառամոլ եւ յանդուգն արանց՝ քայքայեալ եղեւ, զի ետուն տուգանս ի քսակս այլազգեաց, եթէ զտունս եկեղեցոյ որպէս պարիսպ ի միջի առեալ էին բոլորապատ շրջակայիւք՝ արարեալ յիշատակ նոցունց, զամենայն ծախեցին(բ), յաւել և զայն ևս այլազգեաց(**)։ Խաչ եւ սկիհք եւ շուրջառք եւ ամենայն զարդ եւ անօթ սպասուց սրբութեան՝ ամենայն պակասեալ ի սոցա ժամանակս։ Զխաչս և զկանթեղս զարծաթեղէնս և զոսկեղէնս ի հալոց տուեալ՝ աչօք տեսանէաք։ Եւ յորժամ տուգանս անկանէր, բազում անգամ յանմեղացն առնէին, և թէ լինէր առ աչս մարդկան բռնութեամբ տալն, զանօթսն գրաւ անունով տարեալ առ

(*) Զմալիճանն գրեա՛յ աստ։ (**) Սուրբ Սարգսցիք։

(–) «Զի ոչ գոյր ի նոսա ճշմարտութիւն և սիրտք նոցա նանրեալք են։ Որպէս գերեզման բաց է կոկորդ նոցա և լեզուօք իւրեանց նենգաւորք եղեն»։

(բ) «Որոց բերանք իւրեանց խօսէին զնանրութիւն եւ աչ նոցա աչ է մեղաց»։